

Ս. ԽԱՆՈՅԱՆ

ԳԵՂ ԿԱՆԳՆԻ-
ԳԵՐԱՆ ԿԿՈՏՐԻ

338.14
ԽՍ-26

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, -- ՅԵՐԵՎԱՆ, 1930

197 FEB 2010

h-26

Ս. ԽԱՆՈՅԱՆ

ԳԵՂ ԿԱՆԳՆԻ-
ԳԵՐԱՆ ԿԿՈՏՐԻ

1006
29447

1549



Գեղ կանգնի, գերան կկոտրի—խոսքերը արդեն գործ են դարձել ու դառնում են մեր սոցիալիստական հայրենիքում, Խորհրդային Միության մեջ:

Տասնյակ միլիոնավոր գյուղացիների հավաքվելը կոլտնտեսութուններում—սրանք վոչ թե խոսքեր են, այլ փաստեր: Այս տարվա գարնանացանի հաջողութունը, գյուղացիների միացումը տասնյակ միլիոնավոր հեկտար տարածության վրա—մեզ կտա պատմության մեջ չեղած, նմանը չունեցող կոլեկտիվ տնտեսութունների առաջին սոցիալիստական բերքը, հացը:

Հացի համար մզվող կոփվը—դա սոցիալիզմի, նրա կառուցման պայքարն էր և այդ պայքարում մենք հաղթողի դերումն ենք: Սոցիալիզմի գործը դրանով ապահովվում է:

Կոլտնտեսութուններ կազմակու գործը նոր չէ:

Այդ հսկայական մասշտաբով ձեռնարկած գործի նորութունը կայանում է նրանում, վոր նախկին հատ ու կտոր կոլտնտեսութունների տեղ, այսօր գործի լին կաշում տասնյակ միլիոնավոր գյուղացիներ, վորոնք մի ժամանակ գուցե և տատանվում էին ու հաճախ լսում իրենց թշնամիներին՝ կուլակներին:

Այսօր կուլակի դեմ սկսած շեշտակի պայքարը նրան զրկում է գյուղում, գյուղացիական հարցերի լուծման միջոցին վճռական ու ազդեցիկ դեր խաղալ: Կուլակության՝ իրրե դասակարգի վերացումը հեշտացնում է գյուղացիների կոլեկտիվացման գործը:

Մեր ամած նկարագրերը թեև վերաբերում են կոլեկտիվ տնտեսութուններ կազմակերպելու առաջին շրջ-

Ջանին—1929 թվին—բայց և այնպես չէն կորցրել իրենց նշանակութիւնը գործնական տեսակետից:

Ճիշտ է, համատարած կոլեկտիվացումը մեզ առաջադրում է ավելի մշակված կանոնադրութիւններով ղեկավարել բազմաճառար կոլտնտեսութիւնները, ավելի ձևավորել այդ տնտեսութիւնները և այլն, բայց և այնպես, մեր փոքրիկ դիտողութիւնները կարող են ցուցմունք ծառայել շատերի համար, վոչ միայն տնտեսական, այլ և կուլտուրական ասպարեզներում:

Խորհրդային տնտեսութիւնը նվիրած նկարագրութիւնը, վոր համառոտ ձևով հայտնի չե գլուղացիներից շատերին, տալիս է լայն պատկերացում այն մասին, թե վճրպիսի հեռանկարներ ունեն մեծ տնտեսութիւնները: Զե՛ վոր կոլտնտեսութիւնները կարող են իր ժամանակին ընդարձակվել ու գուցե և գերազանցեն այսօրվա Խորհրդային այնպիսի հսկաների, ինչպիսին է «Գիգանտը»:

«Գիգանտը» մի որինակելի դաս է, վորի ստեղծագործմանը նպաստել է պետութիւնը: Աշխատելու չենք կոլտնտեսութիւնների զարգացմամբ հասնել վոչ թե «Գիգանտին», այլ ավելի կատարելագործված ու ընդարձակ կոլտնտեսութիւնների: Այն ժամանակ սոցիալիստական գործն ապահովված կլինի ըստ ամենայնի:

ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՇԵՄԻՆ

Սրանից մի քանի տարի առաջ Հայաստանում, Աշտարակի մոտ մի գլուղում կազմակերպված «կոմունայի» յերիտասարդ անդամներից մեկը մի շատ բնորոշ խոսք ասաց:

Այդ խոսքը նոր գլուղ չեր ու վոչ էլ յերիտասարդ կոմունարի առանձնաշնորհումը: Վաղուց եր հայտնի, բայց ասվեց ի դեպ:

Ի՞նչ եր յերիտասարդի նկատածը:

Այն թե՛

—Ընկեր, են աժդահա չութով սոցիալիզմ կկառուցվի:

Իրոք, վոր առանց չափազանցնելու կարելի՛ չե ասել, վոր Ադամի ժամանակից մնացած, թանգարան տանելու ահագին գերանը, ժանգոտած կտրիչ-խոփով տվել ելին «Վահեներին» թե դուք «կոմունա» չեք, սրանով հող վարեցեք:

Կարելի՛ բան եր...

Այսօր, չերբ Խորհրդային իշխանութիւնը, ասել է՝ մեր բանվորն ու գլուղացին, աղքատն ու միջակը իրենց ամբողջ ուժը լարել են, իրար ուս-ուսի տված՝ կոլեկտիվ տնտեսութիւն հիմ-

քերն են դարբնում, յերբ տրակտորն ու կոմբայնը վտարում են չուխն ու արորը, ակամայից հիշում եմ ջահել կոմունարին, նրա կայտառ ժպիտն ու խոսքերը...

Միայն քաղաքական ու տնտեսական կուլրերը կարող են «առարկել», «ժխտել», մեր խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունների ռեալ արժեքը, նրանց կենսունակությունը:

Բավական է ցուցադրել մի տարվա ընթացքում ցանքսերի տարածության համարյա չեռապատկումը: Մի տարվա ընթացքում ցանքսերը 1, 990 հազար հեկտարից հասել են 4, 400 հազարի:

Անծայրածիր խորհրդային Միության գանազան մասերում կոլեկտիվ տնտեսություններն ընդգրկել են հարյուրավոր գյուղխորհուրդներ, տասնյակ հազարավոր ու միլիոնավոր գյուղացիական տնտեսություններ:

Կոլեկտիվ տնտեսություններն այսօր վոչ թե տեսական ու «վիճելի» լենթադրություններ են, այլև մեր հացի տնտեսության մեջ բռնելու չեն ու բռնում են պատկառելի տեղ իրենց արդյունաբերածի քանակով:

Նույնը պետք է ասել հսկայական չափերով տարվող խորհրդային տնտեսությունների մասին, տնտեսություններ, վորոնք իրավամբ համարվում են հացի գործարաններ:

Հետաքրքիր է նրանցից մի յերկուսի նկարագրերի հետ ծանոթանալը, հետաքրքիր է և ուսանելի մանավանդ նրանց համար, վորոնք չեն կարողանում հաշվել, չեն կարողանում մարսել աչն տարրական միաքը, թե՛ գեղ կանգնի՝ գերան կկոտրի:

Ցարական Ռուսաստանում չեղել են բազմաթիվ փորձեր, յերբ ուտոպիստ ու միամիտ մարդիկ, ապրելով ֆեոդալական ու կալվածատիրական-կապիտալիստական կյանքի դառնությունները, վոչ թե վանք են գնացել միջնադարի կրոնականների նման, այլ աշխատել են ստեղծել «կոմունաներ»...

Կարելի չե հիշել տոլոստոյական աչն «կոմունաները», վորոնք սունկերի նման յերևում ելին, ապա անհետանում, նախաձեռնողներին գցելով հիասթափումների ճախճախուտները... Այլ է այսօրը: Խորհրդային իշխանությունը, պրոլետարիատի դիկտատուրան, իր առաջադրած խնդիրներով իրօր վոր գեղը կանգնեցնում է, այսինքն կազմակերպում, կոտորելու առածի՝ կյանքի խոչընդոտ գերանը:

Դարերի ընթացքում աշխատավորությանը կապկաթ ֆիզիկական ու մտավոր կարողություններից առաջացած քարացումը լենթարկվում է

խոշորագույն շարժման, դինամիկայի ու նրան չի կարող դիմադրել վոչ մի անբարդակ...

Շատերը, դեռ անդիտակից, իրենց բթից աչն կողմ չտեսնող տարրերը վերջիվերջո գալու չեն ու ասելու, թե՛ այո, իրենց մի բողջա հողը, քոսոտած չեզը չեղել են աչն բանտային պատերը, վորոնք մթագնել են ու կաշկանդել, կապել են նրանց առաջ փռած լաչն հորիզոնները:

Ահա ձեզ նմուշներ, իրական, բնական, առանց գուշների թանձրացման: Խոսողն ու պատմողն իրենք կոմունարներն են — գործ ձեռնարկողները:

«1922 թ. ոգոստոսի 13-ին մենք, ամերիկացի բանվորներս, 88 հոգի, նստանք նավ ու ճամբա ընկանք — հեռու ճանապարհ, դեպի աշխատավորների հայրենիք — Խորհրդային Միություն:

Կառավարությունը մեզ տվեց Սալսկի շրջանի արևմտյան ձիաբուծություն շրջանում 5300 հեկ. հող: Մենք այստեղ հիմնեցինք «Սերմնացան» կոմունան:

Վեց տարվա ընթացքում կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը շարունակական ուշադրություն են ցուցադրել մեզ: Մեր մեջ 57 կոմունիստի ներկայությունն ապահովում էր մեր կոմունայի թե՛ գորեղացումը, թե՛ տնտեսական ու ժողացումը և թե՛ անշեղ ղեկավարությունը:

Վեց տարվա ընթացքում մեր թիվը 88-ից

հասավ 254-ի: Մերոնք ութ տարբեր ազգի մարդիկ են, բայց լենինյան ավանդներով միացած, վոչ մի խտրություն վոչ զգում ենք ու վոչ ել կզգանք:

Մեր շինարարությունը տարեցտարի աճում է: Յեթե 1922 թվին մեր բնակարաններն արժեին 3450 ու., 1928 թ. նրանց քանակն արդեն 21,560 ուղբուարժողություն ունեյին — հետզհետե շատանալով:

Անասունները՝ 2248 ուղբուց հասան 64,582 ուղբու: Ել չենք խոսում ցանքսի տարածության ավելանալու մասին:

1924 թվին ցանվել է 618, իսկ 1929 թվին 3500 հեկտար: Ապրանքային հացի քանակը և առհասարակ մեր ունեցվածքը տվել է միջին թվով ամենապակասը 200 տոկոս: Մեր ամբողջ կարողությունը համաչափված է 100 տոկոսով:

Այս նկարագիրը հեքյաթ կամ նաղլ չե՛ վեց տարվա ընթացքում մարդիկ, հեռավոր Ամերիկայից գալով, կազմակերպ աշխատանքով ու միաձուլյ կամքով ստեղծել են իրենց յեռանդի զավակ «Սերմնացանը»:

Վհրն է չեղել նրանց առաջադիմության պայմանը:

— Այն, վոր դաշտաբուծության բոլոր աշխատանքները տարել են կատարյալ մեքենայացման ոժանդակությամբ:

—Ձին ել չի քաշում գութանը, կամ լեզն ու գոմեշը—ինչպես մեզ մոտ, կավեղացնենք մենք...

—«Ձիդ տուր, քաշի, աչ յեզը»... յերգի միալար ու դանդաղ ռիթմը խլացել, կորել ե տրակտորի, կոմբայնի ուժեղ շառաչից...

—Կազմակերպության առաջին տարում մենք ունեւինք 7 տրակտոր, աչժմ՝ 21, կասող՝ 2, աչժըմ՝ 4, խոտակապ՝ 8, աչժմ՝ 22:

—Մենք այս տարի առաջինն եւինք ամբողջ խորհրդային Միութւան մեջ, վոր ձեռք բերինք «Արվաս-Ռումմելի» կոմբայնը...—պարծենում ե «Սերմնացան» կոմունան:

Կոմբայնը, վոր գյուղատնտեսական տեխնիկայի վերջին խոռոն ե, արդեն մեր ցորնադաշտին տիրել ե: Առաջին ծիծեռնակը, բայց վոչ վերջինը, քանի վոր մեր ցանքսի տարածման հետ ավելացնելու յենք նրա քանակը:

Թե վոր աստիճան գյուղատնտեսական պրոցեսի մեքենայացումը կրճատում ե մարդու աշխատանքը, կարելի յե յեզրակացնել նրանից, վոր դաշտաբուծութւան վրա ծախսած 92 հազար 793 ժամից 80 տոկոսն անցնում ե մեքենաներին...

Այս փաստն ինքնին գալիս ե ասելու, թե վորքան անոսկր ե այն մարդկանց կասկածը, թե՝

—Խի, յես աշխատեմ, անգլալ Թաթոսն իմ

վերի կուռը կանգնի, թե ինքն ել ա քյարվան կտրել...

Անգլալ Թաթոսներն ու Մաթոսները յեթե յեզի հետ առաջ գնալով արևի տակ քիթը գետին են խփում, տրակտորի, կոմբայնի ձայնը նրանց կհրի, կզգաստացնի, աշխատանքի կտրամադրի: Մանավանդ վոր ամբողջ աշխատանքի 20 տոկոսը, գուցե և պակասն ե նրանց բաժին հասնում...

Ձե վոր մեքենան ունի և իր դաստիարակչական նշանակութունը: Դանդաղ ու քնկոտ յեզը կարող ե հասնել չարածճի մեքենայի շարժումին...

Մենք չենք ել ամաչում, դեռ ելի խոսում ենք յեզի, ձիու մասին, նրանց համեմատում տրակտորների հետ ու մոռանում, վոր են հռչակավոր ֆորձոնը, վորի մասին յերագում են գյուղացիները, արդեն համարվում ե մի տեսակ մեքենայական... յեզ:

Փորձոնով տարվելու ժամանակն անցավ,—ասում են «Սերմնացանի» անդամները: Նա գուցե պետք գա «փոքրիկ» անհատական տնտեսութւանների մեջ: Մեզ հարկավոր են Բեստի հոյակապ մեքենաները, վորոնցից մեր խորհրդային իշխանութւունը պատվիրել ե 1.400 հատ: Ու նրանք ցանկութւուն են հայտնում, վոր աչդ տեսակ մեքենաներ պատրաստվեն մեզ մոտ, խորհրդային իշխանութւան մեջ...

Հետաքրքիր է, թե ինչպես են նախում իրենք
իրենց վրա «Մերմիացանի» անդամները:

«Մենք ել «գեղացի», «ռանչպար», «վիրուների»
չենք: Մենք վերջ ենք տվել, ինչպես Մարքսն
եր ասում, «գյուղական կյանքի իդիոտիզմին—
ապշուրթյանը»:

«Մեր ու գործարանային բանվորների մեջ մի-
այն մի տարբերություն կա, մենք աշխատում
ենք հացի, նրանք այլ արդյունաբերական գոր-
ծարաններում: «Մենք հացի գործարանի բան-
վորներ ենք»,— ասում են նրանք:

Հացի գործարան...

Ու վորքան շատանան մեքենաների կատարե-
լագործված տեսակները մեզ մոտ, վորքան շա-
տանան կոլեկտիվ տնտեսությունների շարքերը,
այնքան շուտով կվերանա գյուղի անկուլտուրա-
կանությունը, ծուլությունը, այնքան հեքյա-
թային կդառնան մեր վերևում հիշատակած ան-
գլալ թաթոսները...

*
* *

Խորհրդային իշխանության առաջին տարիներ-
ում, չերթ խոսք եր լինում գյուղացիական խմ-
բական կոլեկտիվ տնտեսությունների մասին—
գյուղացիները լուռ, վզները քրքելով ցրվում ե-

ին, չերևի տխմար համարելով այդ ձևի տնտե-
սություն կազմակերպելու միտք հղացողին:

— Իմ չոլախ չեզը լավ է, քան թե դեզի (կո-
լեկտիվի) քյահլան ձին, — փնթփնթում ելին նրանք:
Մանավանդ կանայք:

— Բաս, բաս, լես խիար ցանեմ, կարտոփի
բուզը տամ, թե ինչ ա Չունեմի հարսը պիտի
չոռլամիշ ըլի...

Այսպես եր տարիներ առաջ:

Բայց այդ տարիներն անցան:

Մենք այսօր ապրում ենք վերելքի մի նոր
շրջան: Այսօրվա գյուղը նման է իր կենցաղով
չերեկվա, անթափանց խավարի մեջ ապրող,
մեջքը պատին քսող ու քորող «մատաղ ուտող-
ներին»:

Գյուղն սթափվում է, նրա աչքերը բացվում
են ու հետզհետե ձեռք է զարկում նոր կյանք
կազմակերպելու գործին:

Նրա նախաձեռնությունը, զոռբայից ազատա-
գրվելը, հանրական գործին կպչելն ու այդ կպչե-
լուց ստացած շոշափելի առավելությունները
խթան են հանդիսանալու նրա նորանոր նվա-
ճումներին:

Ել այսօրվա գյուղը չի խրտնում նոր մեքենա-
ներից, տրակտորի տեսքը նրան չի խլշկոտում,
նրան «չարք» չեն համարում վոչ Իվանը, վոչ ել
կարապետը:

Տրակտորն այն առանցքն է, վորի շուրջը, իբր լուսավոր կետի, այսոր հավաքվում է գյուղը:

Յեւ այդ գյուղի հավաքման պրոցեսն է, վոր արմատապես փոփոխելու չէ գյուղացու պապենական սովորությունները, կանթեղից դեպի ելեկտրիկ լույսի անցնելը:

Գյուղացու նախաձեռնություն... Վոչ թե անհատապես, այլ խմբովի, գեղովի: Այս լերեւելթը գուցե շատերի համար անհասկանալի լինի, բայց շատ շատերն ել արդեն գիտակցում են նրա առավելությունը, կուլտուրական ու սոցիալական արժեքը:

Խմբական ու հասարակական աշխատանքի մի բնորոշ որինակ է Մոսկվայի նահանգի, Դմիտրովսկի գավառի Ռեյակինո գյուղը:

Գյուղը մեծ չէ: Քառասուն ընտանիք, վորից միայն 12-ն է հողագործ, մնացածը ցրված են այստեղ ու այնտեղ, որվա սև հաց ճարելու համար:

Սովորական մի «քոստած» — գյուղ, ու այդ սովորական, հավի վոտքերի վրա շինած գյուղն այսոր խոսում է «աղայի» լեզվով:

Ո՞վ է նրան տվել խոսելու այդ ուժը, այդ զարբը: Իր կուեկտիվ կամքը, վորը ջրի չէ տվել նախկին գլավինների ու քյոխվանների հոխորտանքն ու ստրկական շղթաները:

— Թող գյուղխորհուրդը բեզ մեքենա տա,

թող ձեր կոմսոմուր սերմացու դանի,— բղբղում ելին գյուղի մեծերը:

Գյուղը կուչ չեկավ:

Աղքատ, ցնցոտի գյուղը վոտքի կանգնեց:

— Սաղ ըլի մեր իշխանությունը, — ասացին նրանք ու հիմնեցին առաջին փոխարարձ ոգնության կոմիտեն:

Հիմքը դրված էր:

Հետզհետե գյուղում լերեացին մինչև այդ չաեսնված լերկրագործական մեքենաներ — գուլթան, ցանող, կալսող, հող փափկացնող գործիքները դարձան գյուղի զարդը:

Ու մի որ 1925 թվին, Ռեյակինո գյուղն ամբողջովին դուրս չեկավ հասարակախորեն ձեռք բերած մեքենաների համար մի պահեստի հիմք դնելու: Յերեք տարի հետո շինեցին լերկրորդ պահեստը: Այսոր նրանցից մեկը սերմի պահեստ է, մյուսը մեքենաների:

Գյուղի առեղբերը հեռվից հեռու միայն աչք են ածում ու քմծծաղ տալիս... Մեքենաները դրդեցին գյուղացիներին գեղովի հերկել հողը — ձեռք բերին ցանկալի մեքենան ու նրանով պատուեցին հողի կուրծքը:

— Բանը վարելը չի, հունարը հավաքելուն ա, — լսեթում ելին գոռբաները...

— Եղ ել կանենք, վախիլ միք, — ասացին

Ռեյակինսկի գյուղացիներն ու բոլորը, ծեր ու մանուկ, իրենց սալերով բռնեցին արտի ճամբեն: Հավաքեցին:

Բայց ինչպես ասած է, Յերուսաղեմում ել շուն կա: Տղերքը նկատում են, վոր վոմանք անգլալի չեն տալիս: Դե, թաղա գործ, հին մարդիկ:

Ճարը գտնում են:

— Տղերք, — ասում է նախկին կարմիր զինվոր Շալիգինը, — թող ով իր շարքը հնձում վերջացնում է, տուն գնա:

Դե ինչ պիտի անելին անգլալները: Ստիպված ընկերների հետ աշխատում են, վոր չերևա նրանց ծուլությունը:

Արդյունքը:

Այն, վոր աշխատանքը կիսով պակասեց: Առաջվա՝ որական 40 ձիու և 45 մարդու աշխատանքի փոխարեն գործադրվեց 20 ձիու և 24 մարդու աշխատանք:

Գյուղացիները հիմար չեն — գիտեն, թե ինչ չարչարանք ելին կրում հնում, ու այսօր ասում են.

— Հը, վոնց ա, տղերք, լավ ա, թե վատ:

Մանավանդ կանայք:

Մի օր խմբվում են գյուղի կարմիր անկյունում ու կանչում են իրենց «պետին».

— Ինչ ուզում ե լինի, Շալիգին, վորտեղից կու-

գես ճարիր, պիտի մի մեքենա գնես, վոր մեր լվացքն անի: Տես ձեռքերիս կաշին վեր ե չեկել:

Դե, լվացարանի կողքին պիտի կանգնեք բաղնիսի հարցը... հետո չե՞ թե՛ հանրական ճաշարան ենք ուզում, համ ել չերեխոց համար մի մսուր...

Ես կուլտուրական արժեքների շղթան հետը հետե ձգեց իր ողակները, այսօր մեկը, վաղը մյուսը:

Շատ բան կունենալինք — բայց... Այդ բայցը բյուրոկրատական այն ճահիճն է, վորի մեջ խըրվում է ամեն մի առողջ նախաձեռնություն:

Գյուղացիք հո ամենագետ չեն: Նրանց ամեն գործը պահանջում է ոժանդակություն: Ու փոխանակ աջակցության, ստանում են կարուկ պատասխաններ այսպիսի բովանդակությամբ.

— Դեռ վախտը չի, բաղնիքի համար փայտեղեն չկա...

Գյուղը չի վարանում: Հենց իրենք, գյուղացիները փայտեղենն ել են ճարում, վարպետներն ել...

— Վոնց չե, առանց թուլտվության, առանց «համաձայնեցնելու»:

Գյուղն ինքն առանց բյուրոկրատների, սեփական պատասխանատվությամբ շինում է բաղնիքը:



— Հիմի յեւ, չգարմանաք, — ասում են գյուղացիները. — ցեղական հավեր ենք գտել — խոշոր հավկիթներ ածող. ձեռք ենք բերել ինկուբատոր, կազմակերպել ենք խոզաբուծություն — մի խոտքով — առաջ ենք գնում:

Այս նկարագիրը ռուսական խուլ գյուղի այսօրվա պեյզաժն է, նրա կենդանագիրը:

Վերջան դժվար եր հիմքը ու վերջան հեշտացել է շենքի կառուցվածքն իր մանրամասներով:

Ու որինակը վարակիչ է, յեթե մի 40 ընտանիք ունեցող խեղճ ու կրակ գյուղ այսօր տեսնում է իր հավաքած աշխատանքի պտուղը, ապա մյուս կողքի գյուղերն ել քնած չեն:

Գյուղացիները փորձով տեսնում են, թե վորքան դժվար է քիչ քանակով մարդկանցով ու քիչ տարածություն ունեցող հողով խոշոր հետեանքներ ի հասնել:

Նրանք արդեն համաձայնության են յեկել շրջակա գյուղերի հետ, միացնելու իրենց հողերը. մի խոտքով, հասարակական, գեղովի աշխատանքը դարձել է որվա հարց ու իրականություն:

Յերբ Ամերիկայից «հեռու յերկիր» — Խորհրդային Միություն յեկող բանվորները պարծենում են իրենց «Սերմնացան» կոլեկտիվ տնտեսությամբ, իրենց համարում հացի գործարանի բան-

վորներ, ապա դարավոր ստրկություն ապրող Ռեյտկինո գյուղն իր նախաձեռնությամբ պակաս գովասանքի չի արժանի:

Քանդվում է հինը, պապենականը, հսկայական ճիգ ու ջանքերով հնի տեղը բռնում է նորը, խորհրդայինը, կոլեկտիվ կամքի աշխատանքն ու արդյունքը:

Յերբեմնի «մոժիկը» այսօր կոմունարի գրող ձեռին, ռուսական անծայրածիր ստեպներում ել չի յերգում հին ստրկական «Նյու-լանքմը», նրա այդ յերգն անհայտության է մատնվում ճիշտ աջակես, ինչպես հեռու յերկրներում աստանդական կյանքի հնոցում կորչում են նախկին կալվածատերը, պամեշչիկը, կապիտալիստը, իսկ այսօրվանից և կուլակը:

— Տուր մեքենա:

— Տուր տրակտոր:

Ահա գյուղացու այսօրվա պահանջը: Նրա ցանկությունը:

Ու այսպես, տակավ առ տակավ գյուղն ընտելանում է հասարակական աշխատանքին: Այսօր, նախկին «քոստ» գյուղն ունի արդեն տասնյակ հազար արժեցող գյուղատնտեսական մեքենաներ, յերկու հասարակական պահեստ, լվացարան, համաջանցած հող, — շինվելու յեն նույնաման գոմ, սերմի և գետնախնձորի պահեստ. շուտով ամ-

բողջ գլուղի հողը դառնալու յե հասարակութեան սեփականութուն, ու շուտով շառաչելու յե տրակտորը:

Կոլեկտիվ տնտեսութունները հացի գործարաններ են, ինչպես ասել են «Սերմնացան» կոմունայի անդամները:

Ու այդ գործարանների հսկայական շենքերը— ստեպներն այսօր պատռվում են տրակտորներով կոմբայներով, արձակելով դաշտային գործարանների ծուխը...

ՀԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

I

Յերկրորդ խոշոր տնտեսութեան որինակը՝ խորհրդային տնտեսութուններն են: Սրանց գլուխ կանգնած է ինքը պետութունը, վորն աշխատում է մի տեսակ առաջնորդ հանդիսանալ կոլեկտիվ տնտեսութունների, ցույց տալ անհատական մանր տնտեսութեան անշահավետ ու հետամնաց բնույթը, չերբ նրանց հակադրում են հսկայական տնտեսութուններ, իրենց ամեն տեսակի ու տիպի կատարելագործութուններով, այդ տնտեսութունների բնույթից բղխած կյանքի նորմուծութուններով ու կոլտուրական գրավումներով:

Հատիկի հսկայական այդ ձեռնարկութունների հետ ծանոթանալով, գլուղացիութունը՝ վորի չելած մանուկի նման, ինչպես վերն ասացինք, աստիճանաբար իր առաջին քայլերն անելով, արդեն վստահ քայլերով գնում է կոլեկտիվ տնտեսութունների անդաստանով...

Խորհրդային տնտեսութունները մեծ թափի, հսկայական հեռանկարների ու փորձնական խոշոր ձեռնարկութունների դպրոցներ են:

Սկզբնավորութեան առաջին օրերից ղեկավար ու հետաքրքրվողի վրա թողնում են մի անմուռաց տպավորութուն:

Վորքան հոյակապ է, մեծ ու կազմակերպված դաշտային տնտեսութունը, և վորքան վողորմելի յեն անհատական խղճուկ, գաճաճ ու փոքր ցանքսերը:

Այս հսկայական տնտեսութուններից է Հյուսիսային Կովկասում հիմնված «Գիգանտ» խորհրդային տնտեսութունը, վորի մոտավոր ու թուղցիկ նկարագիրն անգամ գրավում է ընթերցողին:

«Համեմել ու առաջ անցնել» նշանաբանը մեր խորհրդային իրականութեան համար լերագական խոսքեր չեն: Նրանք միս ու արլուն են դառնում ու թերահավատներին անգամ համոզում, վոր աշխատավորութեան միաձուլ կամքը հրաշքներ կարող է գործել:

«Վերբլուդ» կիսակայարանը յերբեմն տխրություն տարածող մի կետ էր: Այդ կետից ձախ այսոր մի ուրուհն յեռ ու զեռ է սկսվել, դաշտային միապաղաղությունը վերացել է և տեղի տվել գործարանային կյանքի շտապ ու արագ շարժման:

Հյուսվում, կառուցվում, ավելի շուտ ձուլվում են բետոնի շենքեր, հսկայական ձեռնարկի բոլոր հարմարություններով, բանվորական տներով, ջրատար անցքերով...

Ստեղծվում է կրթափորձական խորհրդային տնտեսության քաղաքը: Այստեղ պատրաստվելու չեն հացահատիկային տնտեսությունների հազարի հասնող դեկավար ու տեխնիկական շոկատները, գնդերը:

Արդեն պատրաստվում են արակտորների ու կոմբայնների վարիչների դասընթացներ: Այստեղ է լինելու և մեխանիզացիայի յենթարկված գյուղատնտեսության արտադրական ու կազմակերպչական մեթոդների հետ ծանոթացող դպրոցը:

2^ե վոր մենք վորոշել ենք — «հասնել ու առաջ անցնել»: Յեվ իրագործելու համար հրավիրված են ամերիկական գյուղատնտեսներ ու ինժեներներ, վորոնցից ստացած դասերը մենք յուրաց-

նելով, ստեղծագործական մեր ունակութուններով կրկնապատկելու, յեռապատկելու չենք և առաջ անցնելու:

Խորհրդային պրոլետարիատն այս տաս-տաս-յերկու տարվա ընթացքում շատ բան է սովորել, թող հիմա չել սովորի ամերիկացիներից, թե ինչպես պետք է վարել մեքենացրած խոշոր տնտեսություններ՝ խորհրդային իրականության մեջ:

Նլ ամերիկացիների համար հատուկ տներ, հիմնարկների շենքեր, ընտանիքավոր ու ամուրի բանվորների համար կացարաններ, խոշոր լվացարաններ-բաղնիքներ, կոոպերատիվի հսկայական շենք, ավտոների համար գարաժ, հրապարակ, արտեզյան ջրհոր, կոյուղիներ:

— Խնչ բուրժուական նախապաշարմունք է, — չերեի կմտածեն շատերը, կարդալով շենքերի կողքին «կոյուղի» բառը, — միթե չեր կարելի չլա գնալ սռանց այդ «շալլության»...

Մենք դիտմամբ կանգ ենք առնում այս կետի վրա. դիտմամբ, վորպեսզի նորից ու նորից հիշեցնենք մեր «խնայողութունից» չեխող ինժեներներին ու կառուցողներին, վոր նոր շինարարության մեջ կոպեկների յետևից ընկնելով, պետք է հազարների փասները մոռանալ...

Ու չե վոր մենք ուզում ենք հասնել ու ա-

ուջ անցնել: Կոյուղին կուտուրական գրավումն
ե ու նրանից հրաժարվելը — հիմարություն...

III

Ահա թե միքանի շտրիխներով ինչպես են կա-
րագրում ընկ. Ոսինսկին աջն վայրերը, վորտեղ
ձգված են թե կրթա-փորձնական նոր քաղաքը,
և թե աջն հոյակապ ու հսկայական կոյտնասու-
թյունը, վոր իրավամբ կոչվում ե «Գիգանտ»,
ասել ե «հսկա»...

«Գնում ենք. աջից ու ձախից բացվում են նո-
րանոր պատկերներ. սրանք բոլորն ել լուռ խո-
սում են մի ինչ վոր նոր, կենդանի ու ինքնու-
րույն կյանքի մասին, կյանք, վոր սկսում ե
աճել հողից: Թե աջից ու թե ձախից չերևացող
պատկերները ու թե աջն, ինչ վոր չերևում ե
առաջից, բոլորնեկ թողնում են մի տեսակ խաղաղ
ու հանգիստ տալավորություն: Ամեն ինչ համո-
զող ե, հավաստիացնող, չերևում ե կարգ ու կա-
նոն, ճշմարտություն, գործելու ունակություն ու
կարողություն: Յերևում ե, վոր մերոնք կարո-
ղանում են գործը գլուխ բերել:

Ու ահամա հարց ե ծագում. վճրտեղ ենք մենք՝
Արևմտյան Դակոտան, թե Մոնտանում (Հյուսիս-
սային Ամերիկա):

Վո՛չ. ինչ-վոր մի նոր աշխարհում, վարը Դակո-

տից ու Մոնտանից փոխ ե առել տեխնիկական
ձևերը և գործի դրել նոր հիմքերով, մի առան-
ձին սեր տածելով դեպի աջն, ինչ վոր արվում
ե կառուցողների ու վոչ թե գործարանների դե-
լեցների ջահել ու առողջ յեռանդով»:

Ընկ. Ոսինսկին չոր մարդ ե, թվերի ու փա-
սերի սիրահար, նրան մեղադրել լիբիզմի ու եժան
սքանչացման մեջ չի կարելի:

Բայց իրականությունը նկարագրելիս, ահամա
որչեկտիվորեն դառնում ե լիբիք: Փաստերը շատ
են ու վտակրոտ, նրանց չոր նկարագիրն անգամ
ընդունում ե զեղման բնույթ:

«Ձախից, — շարունակում ե Ոսինսկին, — հացի
բաղեղների միջից դուրս ե սողում մի մեքենա,
յետևից ծխոտ փոշու չերիզ թողնելով:

— Կանգնիր, կաց, հվ ե: Մեքենաները կանգ
են առնում: Դուրս ե ցաակում չերկար, չոր ու
սափրած, ակնոցավոր, վոչ ախքան ամերիկացու
նման հագնված մի մարդ:

Ամերիկացի գյուղատնտես կոմունիստ Ուերն
ե, կոլեկտիվ տնտեսության վերատեսչի ոգնա-
կանը:

Մյուսը, մեքենայի մեջ նստածը, ամերիկացի
լավագույն գյուղատնտեսներից մեկն ե, պրոֆեսոր
Վիլսոնը, վորի հետ ծանոթանալուց հետո, մեզ
հրամցնում ե հասուն ցորենի հատիկներ մի
կողմից ծամելով բերանն ածած սերմերը...

Այո, ձեռքս վոր մեր կողեկալով տնտեսութեան-
ները նոր հիմքերով կազմակերպված մի նորու-
թեան են, կուլտուրականութեան ու ստեղծա-
գործող աշխատավորականութեան պատվաստից
ծնող, զարգացող:

Անփորձութեանը տեղ-տեղ յերևում է: Այդ
անփորձութեան նմուշ պիտի համարել մի հան-
գամանք, վորի մոտից անուշադիր անցնել ան-
կարելի չէ:

Մենք այսօր գործ ունենք վոչ թե դանդաղ,
որեր պահանջող գերանդահնձի կամ մանգաղի
հետ: Մեզ հարկավոր է լինում մի քանի ժամ
հունձը վերջացնելու: Յե՛վ այդ փոքրիկ հանգա-
մանքը՝ մոռանալով, մեր տեղական գյուղատըն-
տեսները, հենց վոր արտերը մի կողմից սկսում
են դեղնել—սկսում են հունձը: Ու կանգնած են
չհասած արտերի առաջ:

Հնձել, թե թողնել:

Ամերիկյան կոմբայնները դանդաղկոտութեան
որերի հետ կապ չունեն: Արտը մինչև չհասնի,
նրանք չեն հնձի, իսկ մերոնք-դեռ հին տրադի-
ցիայով շարունակում են իրենց վաղեմի ազաթ-
ներով աշխատելը—հնձելը:

Դուրս է գալիս Մոլլա-Դուրսունյան ամերի-
կանիզմ: Դեհ, ինչ արած, մեր պապերն ելին
տեսել կոմբայններ:

Ձե՛ վոր դեռ հեռու սարերում լավում է՝

«Ձիգ տուր, քաշի, ալ լեզը, արա հո...»

Շատերը, վորոնք լսել են ամերիկյան կյանքի,
նրա դինամիկայի, բազմահարկ շենքերի ու առ-
հասարակ տեխնիկական բարձր կուլտուրայի մա-
սին, թերահավատ են գտնվում դեպի մեր՝ խոր-
հրդային, մասնավորապես գյուղի տնտեսութեան
ամերիկանացումը:

Ի՞նչպես,—չու՞թից, գութանից դեպի տրակ-
տոր ու կոմբայն, մեր անանցանելի, ցեխոտ ճա-
նապարհներով...

— Հավատալս չի գալիս, անհնարին է, «դա-
րեր» են հարկավոր,—ասում են վոմանք:

Հատկապես Ամերիկա գործողված ու «Գի-
դանտ» կոլտնտեսութեան վերատեսուչ Մարգոլի-
նը հետևյալ տեղեկութեաններն է տալիս ամե-
րիկյան «մեծ», «հսկայական» գյուղական տըն-
տեսութեաններին մասին:

«Հացահատիկի շրջաններում,—ասում է նա,—
ինչպես հայտնի չէ, Ամերիկայում տիրապետող
են մանր՝ 130-ից մինչև 200 հեկտար տարածու-
թեան ունեցող տնտեսութեանները: Այնտեղ խո-
շոր է համարվում տնտեսութեանը, յեթե նրա
տարածութեանը 400 հեկտար է: Մեծ տնտե-
սութեաններն ունենում են առհասարակ 1200-ից
3000 հեկտար տարածութեան: Կանգաուի կան-

տոնում անցյալ տարի կազմակերպվեց մի տնտեսութուն 12 հազար հեկտար տարածութեամբ:

Թոմաս Կեմպբելը, վորին մեզ մոտ շատ ունեցրել են, իր տրամադրութեան տակ ունի ընդամենը 40 հազար հեկտար, վորից միայն 30 հազարն է մշակվում—ու պետք է ասած, միակն է ամբողջ Ամերիկայում: Ու հենց այդ ամենամեծ տնտեսութունն անգամ չի կարող մեզ որինակ հանդիսանալ, քանի վոր Կեմպբելը դեռ ցայսօր շարունակում է աշխատել հին, մեծ տնիվներով տրակտորների վրա, տրակտորներ, վորոնց վաղուց բարձի թող են արել ու իբր անպետքութուն՝ լավագույն ֆերմերները մի կողմ են շարտել:

Մյուս կողմից, Ամերիկայում միայն կարելի չէ տեսնել, թե ինչպես գյուղատնտեսութեան մեջ գործադրվում են բարդ մեքենաներ:

Սրանից է, վոր մենք շատ բան ունենք սովորելու ամերիկացիներից, ուստի և պետք է ամեն տեսակ հարմարութուններ տանք նրանց, վորպեսզի չխրտնեն ու չփախչեն:

Ամերիկական գյուղատնտեսները մեր խորհրդատնտեսութեան առանձին հոգատարութեան առարկաներ են: Նրանց համար շինվել են, ավելի շուտ՝ ձուլվել են, չերեք յերկհարկ, ամերիկացիների քմաց համապատասխան շէնքեր՝ վաննաներով, տաք ու սառն ջրով:

Արդեն մի փոքրիկ քաղաք է առաջացել հիմնարկի վարիչների, ընտանիքավոր ծառայողների, բանվորների, ինչպես և «ամուրիների» համար, կան բաղնիք-վազարան, կոոպերատիվի հատուկ շէնք, գարաժ-անգարներ—տրակտորների համար և այլն:

Արտեզյան ջրհորն արդեն կապահովի խմելու ջուրը: Տեղացիները,—ասում է ընկեր Ոսինսկին,—արդեն նորակառույց դաշտաքաղաքին տվել են «Նոր-Մոսկվա» անունը:

Մի ժամանակ չեմբուպցիների անճոռնի ընդորինակումը մեզ մոտ սրախոս դարձվածքով կոչվում էր «Տամբովյան պարիզեցի» անունով:

Հիմա, նոր կառուցվող քաղաքը—հացի գործարանի հետ կցված անհրաժեշտութունը—շատերը թերահավատներից կանվանեն «Կովկասյան Ամերիկա», բայց այդ սրախոսութունը բթախոսութուն պիտի համարել:

Յեթե Լենինն ասում էր, թե խորհրդային իշխանութուն, պլյուս ելեկտրոֆիկացիա—հավասարվում է սոցիալիզմի, ապա ներկա խորհրդային տնտեսութունները, պլյուս ամերիկական տեխնիկան—կարող ենք համարել սոցիալիստական շինարարութեան պրիմատը:

Յերևակայեցեք մի քաղաք, վոր ստեղծվում է անծայրածիր ստեպում, խորհրդային տնտեսու-

Թյան, խոշոր գործարանային, այն էլ հացի գործարանին հատուկ շենքով: Այս քաղաքը մեկն է սոցիալիստական նոր կենցաղի, սոցիալիստական կուլտուրայի շղթայի ողակներից: Խոսքով հեշտ է ասել, բայց իրականության մեջ միս ու արյուն դարձնելն է գործը: Շենքերն իրենք իրենց արդեն խոսում են նույնպես կյանքի ուրույն բնույթի մասին:

Կրկնում ենք.—

Չկարծեք, թե այս շենքերը «ճոխություն» են կամ «բուրժուական նախապաշարումի» արդյունք: Հենց միայն այս տարի ցանված է 5 հազար հեկտար, վորը վարվել է անցյալ տարի...

Հեշտ է խոսքով ասել 5 հազար, 10 հազար, 20 հազար—չէ՞ վոր սրանք տարածություններ են, ու չէ՞ վոր մենք ուզում ենք մեքենայացման միջոցով տանել ու վարել մեր տնտեսությունները: Ճոճաճան սալերով, տնքացող յեղներով ու բոստոած ձիերով, մինչև բողաղը ցեխի մեջ խրված անասուններով այստեղ գործ գլուխ չի գա:

Ահա թե ինչու մենք ուսուցիչ ենք հրավերել ամերիկացիներին, ահա թե ինչու գտնում ենք, վոր ցեխ ու բախլախ ճանապարհներով վոչ միայն չենք հասնի Ամերիկային, այլ կխրվենք տեղմի մեջ, կկոտորենք թե սալի ալը, թե ձիան կամ յեղի վոտը:

Ամերիկյան ճանապարհ...

Հակառական գործ ենք սկսում. պետք է այդ գործին համապատասխան հարմարություններ ստեղծենք, հաղորդակցության պապենական միջոցներից ձեռք վերցնենք ու դիմենք նոր ու ժամանակակից քալերի:

Ու կրթա-փորձնական քաղաքից դեպի ցանքսերն առայժմ ձգված է 15 կիլոմետրանոց հարթ, սլաքանման, լայն ու վողորկ ճանապարհ:

— Վոր յեղ թափես, կհավաքվի—ախքան է մաքուր ու հստակ,— հիանում են մարդիկ:

Ո՞վ է շինել այդ ճանապարհը:— Ճանապարհի շինարար խումբը, վոր ամերիկացիների դեկավարությամբ համարյա թե ուսնդել է դաշտը, շինել է այդ կոկիկ ուղին:

Առանց վախենալու 70—80 կիլոմետր կարելի չէ մի ժամում անցնել ավտոյով:

Այլ կերպ անկարելի չէ: Սկսած մեծ գործն արագ շարժում է պահանջում, ու այդ պահանջին բավարարում է նորակառույց ճամբան:

Յերկարելու չե, յերկարելու, և վերջ տալու մեր ցեխոտ ու անանցանելի «որհնած» դեզի ճամբաներին:

Տրակտոր, կոմբայն...

Տրակտոր տեսել ենք. վոչ միայն տեսել ենք, այլ արդեն գործնական է մեր, նույնիսկ Անդրը-

կովկասյան դաշտային վայրերում. բայց ինչ է կոմբայնը: Կոմբայնին արդեն ավել են «հացադաշտի նավ» մականունը:

Յեվ իրավ:

Ինչպես նալի վրա նավավարը կանգնում է վերին պատշգամբում, հեռադիտակը ձեռքին, արձակում է իր հրամանները, այնպես էլ կոմբայնի վարիչը կամ կոմբայնավարը կանգնում է ղեկանիվի մոտ ու լող է տալիս տրակտորի յետեից հացի ծովում...

Ամերիկայում հացահավաքի կոմբայնով տանելու տնտեսական ձեռնտվության մասին արդեն վոչ մի կասկած չկա: Քառասուն հեկտարանոց արտը կոմբայնով «հնձելն» ավելի ձեռնտու չե, քան թե խրձակապ ու կալսող մեքենաներով: Ըստ վորում, վորքան խոշոր է տնտեսությունը, այնքան ավելի շահավետ է խոշոր չափերի կոմբայն բանեցնելը:

Կոմբայնը վոչ այլ ինչ է, յեթե վոչ հնձելու և կալսելու գործողությունները համաձայնեցնող մի «նավ»... կալսող մեքենայի իրանին — կորպուսին, վորը շարժման բոլոր միջոցին սեփական ներքին վառումով բանում է ու կալսում, կցված ունի աջ կողմից մի թև, վորը կոմբայնը նմանեցնում է միաթև սավառնակի: Այդ թևը կոմբայնի մանգաղն է, հնձվորը: Առաջից նմա-

նում է մի մեծ կեռ սանրի, վորի ատամները միջև տեղավորված են կարող պլաստիկաներ: Այս սանրը վոչ միայն «սանրում է», այլև խուզում, կտրում է ատամներին հանդիպող բուսականությունը: Սանրի վերեից շարունակ պտտվում է յերկարավուն վեցանկյուն մի վանդակ, ավելի շուտ վեցանկյունաձև մի կմախք: Նա հասկերը կռցնում է դեպի սանրը և յերբ նրանք կտրած են, յետ է քշում, հրում դեպի սանրի յետևի կողմը: Այստեղ սանրի վրայով վազում է մի անվերջ քաթան, վորը և հասկերը տանում է դեպի կալսող մասը, կալսող մասի պոչից շարունակ դուրս են թուշում հարդի կտորներ, թոզ, Կալսած հացը ելեվատորով բարձրանում է և թափվում հատիկի դուշը: Յերբ դուշը լցվում է, ածում են կամ սալը, կամ ապրանքատարը:

Կոմբայնը հնարված է սրանից 40 տարի առաջ և դեռ գործողություն է Ամերիկայի հացի գործարաններում: Այդ 40 տարի առաջ գտած դաշտանափն է, վոր պահանջում է հարթ ու զգված, վերոհիշյալ նկարագրի ճանապարհը:

Յեվ տարրի նախն աշն է, վոր ոռոս կլասիկ բանաստեղծների յերգած, ոռոսական եպոսի, Պուշկինովյան շրջանից մնացած կուսական ստեպներում, թողից մղկած, բաղեղներով խեղդված

վայրերում, ինչպես ընկեր Ոսկնոկին և ասում.

— Սոցիալիզմը վեր և բարձրանում ինչպես մի իրական, կոնկրետ ու ինքնուրույն իրականություն...

Կոմբայնի գործադրությունն ստեղծում է և մի ուրույն դաշտային կենցաղ: Յեթե այդպիսի մի մեծ անտեսություն դերժ լինեք գործադրություն մեջ մտած կոմբայնից, չերևակայեցեք, թե ինչ իրարանցում եք լինելու արտերում ու նրանց շուրջը:

Ո՛վ չի իմանում, թե մեր խորհրդային իրականություն մեջ, նույնիսկ փոքր, գաճաճ անտեսությունների մեջ, հնձի ժամանակ ինչ իրարանցում է, ինչ տոնակատարություն:

— Աղջի, հնձվորի համար խորագ պատրաստիր, աղջի, հնձվորի համար հաց թխի, ջուր դարկե՛լ ես... — շարունակ լսվում է գյուղի ներսը, իսկ դաշտում:

Բազմաթիվ հնձվորներ, փորը մանգաղն է սըրում, փորը հնձում է, փորը ձեռքի վերքն է կապում, փորը գլխի կապոցն է դրում — շունչ քաշում արևի կիզիչ ճառագայթների գիմաց և ալյն, և ալյն:

Ի՞նչ պիտի լինեք այնպիսի մեծ անտեսություն հալը՝ սովորական հնձվորների գնդեր պահելով, հենց թեկուզ սեզոնի ընթացքում:

Ել չենք խոսում ճոճացող սայլերի, խրճերի, դեղերի, ֆուրգոնների մասին: Այդ բոլորի տեղը բռնում են միջանի կոմբայններ, փորոնք քառակուսաձև կամ շրջանաձև անցնում են «արտով»: Մոմեն մի ազերգատ-բաժին ունի իր արակառքիսն ու կոմբայնավարը: Ակնոցներն աչքերին, բանվորական հագուստով նրանք ղեկավարում են թե մեկը և թե մյուսը: Դաշտով մեկ, աղմկելով, գլորվում են մի տասնյակ սերմազարիչ մեքենաներ, մի հսկայական շարժական գործարան: Դաշտը դառնում է մի գործարանական վայր, մի տարածություն, ուր աշխատում են արտադրող մեքենաներով և ուր ստացվում է գործարանական արտադրություն, — փորը հնում կոչվում էր «գյուղատնտեսություն»:

Յեթե մի բույս լենթադրենք, փոր հացի գործարանները «հիմնվել են» մեզ մոտ, Անդրկովկասում, որինակ՝ Հայաստանում, ել չենք լսի մեր հին բանաստեղծներին վոգեարող «մանինբը», «Սուրմալուի մրմուռները», կամ թե «Աբարանի «իմալ ենեմ»-ները: Սրանց ձայները խլանալու չեն աղմկող մեքենաների շառագի ու շչակների զիլ ձայնից, հետևապես, մեր գյուղն ու գյուղացին, «ռաշպարը», «մաճկալը» դառնալու չեն թանգարանային եքսպոնատներ...

Կոմբայնների վարիչները լծակների ու դեկերի

առաջ կանգնած, լինչ կտակած, վոր հեռու չեն լինելու գյուղացիական հոգեբանությունից — դառնալով ինդուստրիալ բանվորներ:

Յերևակայում եք, վոր գյուղացին փոխելու չե թե իր հոգեբանությունը, թե քայլելու ու թե խոսելու ութմը:

— Հըլե, դե, ով ե իմանում, — ել ծոր չի տա, որինակ, Հոռվա գյուղացին:

— Յարաք անձրե գալու լամ, աչ գյադա, — ե չի առելու Կոտայքի շինականը:

Ել Յոթվեքքի մխած քարերը չի մաշելու իր համբուլյրներով շիրակեցին...

Վերջ ե ստանալու ասիական, արևելյան դանդաղկոտությունը:

Վերջ ե տրվելու՝

— Աստված վոգորմած ա, մի բան կանենք, յուրա կերթանք, — անորոշ ու ձգձգվող վեճերին:

Մեքենայի ութմը վարակելու չե և գյուղացուն, դարձնելով նրան արագաշարժ, ճշտապահ և զգաստ...

Յերևակայեցեք, վոր չեզան արաբային քնած գյուղացի ել չի լինի, չեզը կվերանա աշխատանքի աշխարհից ու ամեն տեղ — դաշտում — կզործի, կշառաչի մեքենան — արակաորն ու կոմբայնը:

Պողպատե չեզները քլալլա չեն տալու և չեզ-

ներին: Ո՛վ ումը, — մեքենան չեզանը, թե՛ չեզը մեքենային:

Ահա, թե ինչ պրորեմներ ե լուծում կոմբայնը — դաշտի նավը — Ամերիկայից Խորհրդային Միություն չեկած ու արդեն զործադրվող կոմբայնը:

Մենք մինչև այժմ խոսում ելինք կրթա-փորձնական խորհրդային անտեսության ու այդ առնա-տեսության արտաքին՝ այսպես ասած՝ տեխնիկական նվաճումների մասին:

Այժմ տեսնենք, թե լինչ ե ներկայացնում իրանից «Հսկա — Գիզանա» կոշված անտեսությունը:

Հսկա... Գիզանա...

Բավական ե ասել, վոր մեր նկարագրած կրթա-փորձնական անտեսությունն իբր ամբողջություն կանգնած ե ամերիկյան աշխարհահրուշակ Կեմպբելյան մեքենայացրած անտեսության կողքին իբր հավասարը հավասարի:

«Հսկան» իրոք վոր հսկա չե իր տարածությամբ. նա չերեք անգամ մեծ ե հիշած՝ թե կրթափորձնական ու թե Կեմպբելյան անտեսություններից:

Ավելի լավ պատկերացնելու համար նրա մեծությունը, խոսենք առարկայորեն: Յերևակայեցեք «Հսկայի» հողային տարածությունը քառա-

կուսիի ձեռով, կամ իբր մի խալիչա, մի կարպետ: Այդ խալիչան կամ կարպետը չերկարությամբ ու լայնությամբ հավասար լինի 40 կիլոմետրի:

Ահա այդ «չնչինն» ե նրա տարածությունը:

Իհարկե, «հսկան» այդ ձեռ չունի», նա ավելի շուտ նման է մի անկանոն յեռանկյունու կամ սեպի: Վորպեսզի կարողանաս մի ծալրից մյուսը գնալ, պետք է կտրես 60, 70 գուցե և ավելի կիլոմետր—այլ կերպ ասած, պետք է անցնես մի ամբողջ գավառ...

Այսպիսի մի գավառ—արտ է «Հսկա» խորհրդային տնտեսությունը և նրան կրթա-փորձնական տնտեսությունից տարբերողը՝ արտաքին ձևավորումների բացակայությունն է: «Հսկան» տեխնիկայի տեսակետից հավանություն չունի «կատարելություն» ցուցադրելու: Այստեղ ամեն ինչ դրած է գործնական հողի վրա, — վորքան կարելի չէ շատ ու ածանազին հաց արտադրել: Այստեղ ճանապարհներն առ այժմ ավելի պարզ են, տները կրում են ժամանակավոր շենքերի տեսքը: Աշխատավորները հաճախ քնում են շրջակա գյուղերում և այն: «Հսկա»-յում տարվում է իսկական հսկայական աշխատանք: Այս տարի նա «հնձել է» 60 հազար հեկտար, մյուս տարի ցանելու չէ 100 հազար, վորից 42 հազար հեկտար աշնանացան:

«Հսկան» աչքի չէ ընկնում իր հասարակական աշխատանքի թափով: Ունի սեփական որաթերթը «Հսկա» անունով և 5.000 տիրաժով:

Մոռացանք հիշատակելու, վոր կոմբայների վրա աշխատողները, շնորհիվ գործի նորության, ամերիկացիների հետ համեմատած, կատարում են նրանց գործի 60 տոկոսը: «Հսկա»-յում գործում է 26 կոմբայն և 190 խրճկապ:

Աշխատանքն այստեղ կրում է վորոշ չափով հնության կնիք: Բայց այդ պահան ինքնըստինքյան կվերանա, վորովհետև ինչպես վերն ասացինք, կոմբայնը ստիպելու չէ դիմել տեխնիկական ու արանսպորտի կատարելագործված միջոցների:

«Հսկա»-յում աշխատող բանվորների թիվը 6400 է, իսկ կրթա-փորձնական տնտեսությանը՝ 370: «Հսկայի» բանվորների քանակը 16 անգամ ավել է, թվում էր, թե ստացվող ցորենն էլ պետք է 16 անգամ ավել լինի: Հաշիվը ցույց է տալիս, վոր բանվորների թվաբանական քանակը չի համապատասխանում աշխատանքի նույն անոման արդյունքին և 6400 բանվորը կրթա-փորձնական տնտեսությունից 11 է կես անգամ ավել է միայն «հնձում»:

«Հսկան» տարածվելու չէ էլ ավել, հասնելով մինչև 150.000 հեկտարի: Մեզ թվում է, վոր

այս աներեակայելի «արտը» կարող ե արդարացնել իր վրա դրած հուշները, յեթե միայն՝ ժամանակին վրա հասնեն տեխնիկական այն հարմարությունները, վորոնցով պայմանավորված ե նման մեծ տնտեսությունների աջողությունը:

Թե կրթա-փորձնական ե թե «Հսկա» տնտեսություններում փորձում են կոմբայնների ու տրակտորների զանազան «սխառմաները»: Տրակտորներին, հավանականաբար, տիրապետողը համարվի վորդաձեվը, վորն ի դեպ ասած, շատ ե սակավ «Հսկա» տնտեսության մեջ:

Տված նկարագիրը ցույց ե տալիս, թե ամերիկյան իրականության տեսակետից վորպիսի աննախընթաց, նույնիսկ խոշոր տնտեսություն ե «Հսկան»: Արտաքին դիտողություններն անգամ ասում են մեզ, վոր մեծ ղեկավարությունների առաջ ենք կանգնած, ղեկավարություններ, վորոնց հաղթահարելու յենք, ինչ ել վոր լինի:

Կարող եք յերեակայել մի գործ, վորի համար անհրաժեշտ ե ունենալ հմուտ դեկավար, լուծել պարենավորման, տեղավորման ու մի շարք այլ կենսական հարցեր: Անշուշտ ղեկավար գործ ե ե այդ ղեկավարությունները լուծվում են «Հսկա»-յում համեմատական հեշտությամբ:

Մեր ունեցած հացի «ճգնաժամը» թե կրթա-փորձնական ու թե «Հսկա» տնտեսություններին

ստիպել ե ցանել հացահատիկ: Հարց ե ծագում,—ասում ե Ոսինսկին,—շարունակվելու յե հացահատիկի ցանքսը, թե պետք ե վորոշ փոփոխություններ մտնեն: Առ այժմ այդ հարցերը մոռնում են վորպես տեսական խնդիրներ, քանի վոր, ինչպես ասացինք, հացի ճգնաժամ ե: Հավանականաբար տարիների ընթացքում «Հսկա» տնտեսությունը փոխի իր հացահատիկային բնույթը:

Մոտակա տարիներում կրթա-փորձնական խորհրդային տնտեսությունը կլուծի հարցը, թե ինչպես ե տարվելու տնտեսությունն այդ մեծ ձեռնարկներում:

Կյանքը կանգ չի առնում. ով ե իմանում, թե ինչ նորություններ, ինչ հեղաշրջում կարող ե տեղի ունենալ զաշտաբուծության ե առհասարակ հացահատիկների տնտեսության բնագավառում:

Ամերիկայում,—ասում ե Մարգոլինը,—հացահատիկային շրջանների լավագույն ազարակատերերը զործադրում են, այսպես կոչված, ամառային հանգիստը:

Ի՞նչ ե նշանակում ամառային հանգիստ:

— Այն, վոր հողը վարում են վաղ գարունքին, կամ թե աշնանից ե ցանքսից ազատ հողը միջանի անգամ մշակվում ե, այսպես կոչված,

կուլտիվատորներով, վորպեսզի հողը զերծ մնա
փաստաւոր բուսականութիւնից:

Ամերիկայի հացահատիկային շրջաններում,
ինչպես և մեզ մոտ, գտնվում են չորային ու
կիսաչորային զոնաներ: Արհեստական վոռոգում
նախ՝ ամեն տեղ մտնել անկարելի չե ու յերկ-
րորդ՝ ձեռնաւոր չե:

Ամառային «հանգիստը» նրանով է լավ, վոր
հնարավորութիւն է տալիս հողին հալածել բա-
վականաչափ խոնավութիւն: Փորձերը ցույց են
տալիս, վոր այդ ձևի վարը հողը հարստացնում
է ազոտով: Իսկ հողի մշակութիւնն ազատում
է նրան անպետք բուսականութիւնից:

Ամառային հանգստի տված արդյունքներն ա-
պացուցում են, վոր մեր պայմաններում, չորա-
յին զոնաներում — այդ հանգիստը միակ ու ռա-
դիկալ միջոցն է և հանձնարարելի չե մեր մեծ
տնտեսութիւնների հացի արդյունաբերութիւնն
ապահովելու տեսակետից:

Յեթե ամերիկյան փորձը մեզ զեկավար ըն-
դունենք՝ իսկ չընդունել չենք կարող, քանի վոր
միակն է ամբողջ աշխարհում, ապա պիտի ա-
սենք, վոր մեր տնտեսութիւններում ևս, քանի
վոր պայմանները համանման են, գործադրվելու
չե հողի մշակութի նույն ձևը: Խորհրդային տըն-
տեսութիւններն ամերիկյան ձևով տանելու հա-

մար, հիմնված այնտեղի փորձի վրա — անհրա-
ժեշտ են ամառային հանգիստ, վորդաձև տրակ-
տոր, կոմբայն, ապրանքատար և... լավ ճանա-
պարհներ:

Մեր իրականութիւնը մեզ տալիս է մի շարք
հարմարութիւններ, — առատ հող ու բարենաշնոյ
կլիմա:

Յերկու տնտեսութիւնների վորակը, տարվոյ
գործը, աշխատակիցների լուրջ վերաբերմունքը
և գործի կանոնավոր ընթացքը զրավական են
աշոգոլթյան:

Ու այն հարցին, թե ամերիկյան փորձը կա-
րող ենք կիրառել մեր խորհրդային տնտեսու-
թիւններում — Մարգոլինը պատասխանում է
զրական կերպով:

Յերկու տնտեսութիւնների փորձը ցույց է
տալիս, վոր Խորհրդային Միութեան մեջ էլ կա-
րելի չե, առանց ելական սխալների, նույնիսկ
կարճ ժամանակամիջոցում, զարգացնել այնպիսի
մի հսկայական գործ, վորին գուցե նախանձեռն
Հյուսիսային Ամերիկայի և Կանադայի հացի գոր-
ծարանները:

Իրավ:

Ինչու Ամերիկայում, Կանադայում մասնավոր
ֆերմերները, ագարակատերերը կարող են այդ-
պիսի մի գործի ձեռնարկել, իսկ մենք, Խորհր-
դային իշխանութիւնը, վոչ:

Յեթե մեր, նախկին, ցարական Ռուսաստանի տնտեսությունը, ինչպես և Յեվրոպայի փորձը ցույց են տալիս մեր հետամնացությունը,— պատճառը պետք է փնտռել հին կալվածատիրական տնտեսավարություն մեջ:

Յերևակայեցեք մի հսկայական տնտեսություն, ուր գործի լեն անցել հարյուրներով տրակտորներ, գութաններ, խրձկապեր, տաննյակ կոմբայններ, կազմակերպվել են շարքերով հացի գնացքներ, կան հազարավոր բանվորներ և այլն, ինչ չի կարելի անել:

Յեվ կարո՞ղ ե այս հսկայական արշավի դիմաց կանգնել այն խղճուկ տնտեսությունը, վոր տարվում է չուժով, գութանով, միջանի զույգ վախառ քոսոտ յեղներով:

Խորհրդային տնտեսությունները, վորոնք առաջժամ յեղակի լեն, կամ մատներով համարելի, ինչպես վերևումն ասինք, թե իրենք են զարգանալու և թե դատարարակշական կրթական նշանակություն են ունենալու մեր դուրգացություն համար:


Հեղհեղեղ զարգացող, թվով աճող կոլեկտիվ տնտեսությունները լեն չմնալով խորհրդային տնտեսություններից իրենց գործունեություն թափով, գործ դրած յեղանդով ցույց կտան, կապացուցեն, թե վորքան կարճամիտ ելին

նրանք, վորոնք աշխատավորության յեղանդին ու գործին չհավատալով՝ խարխափում ելին ու դիպչում թերահավատության լերկ ժայռերին:

Խորհրդային իրականությունն իր մեջ թագըրած ունի աշխատավորական մեծ յեղանդ, տոկունություն, վորը զուգորդված ամերիկյան տեխնիկային, իրոք վոր, վոչ միայն մեզ կհասցընի, այլև առաջ կտանի ամերիկյան հացի գործարանների զարգացման ներկա առախճաններից, ունեցած ներկա նվաճումներից:

Հյուսիսային Կովկասի, Ռոստովից 150 կիլոմետր հեղավորության վրա գտնված կրթափորձնական ու «Հսկա» խորհրդային տնտեսությունները դրանց լավագույն լերաշիւքն են:





ՀՀ Ազգային գրադարան



NL0205950

Գինը 10 կոպ. (Մ.) $1\frac{1}{2}$ մ.

